

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Լ. Պարսկ Դմ. 8 Մճ.
Պարսկ Դմ. 10 Մճ.
Վեցամսեկ Լ. Պարսկ Դմ. 4 Մճ.
Պարսկ Դմ. 5 Մճ.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, երեք անգամի հա-
մար 1 դուրուշ, զատ սակարկութեան կը-
լայ :



ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գալով լրացրու ճանրու
ծախքը խմբագրութեան վրայ է :
Լրացրու վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութեան խմբագիր
հասցեն անհրաժեշտ է հաշ-
վառ Ստամբուլ քաղաքի ճամբարի թիւ
198, Նորո խան, Մասիսի գրասեն-
տակը :
Համարու ծախքը չիմարտած նա-
մակ չընդունուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԴՈՒՄՆԱԿԱՆ 14 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եւրոպայի հասարակային կարծի-
քը, զինուորական և գիւտնագիտա-
կան այլ և այլ գիտելիքներու հանդիսա-
տեա ըլլալէ ետեւ, Ուրեկեան խնդ-
րոյն փոփոխութիւններէն ձանձրոյթ
և յագնութիւն զգալ կ'սկսի : Ներկայ
վիճակին վախճանն ոչ ոք կրնայ դու-
շակել, այսու ամենայնիւ իւրաքան-
չիւր որ աւելի նախամեծար կը հա-
մարի իւր ուշադրութիւնը վայրկեան
միտելի կողմ դարձնել : Սակայն ներ-
կայ շփոթ վիճակն ա՛յնչափ արժանի
է ուշադրութեան, որ եթէ առաջ-
ներէն այսպիսի վիճակ մը դոյնանար,
միաբերը խիստ շատ պիտի յուզէր :
Այսօր կ'զգացուի որ Պէրլինի դաշ-
նագրութիւնը բնաւ բան մը վերջա-
ցուցած չէ, այլ ընդհակառակն՝ նոր
գիտարութիւններ յարուցած է՝ ա-
ռանց իւր խորհրդածութեանց ներ-
կայացեալ խնդիրները լուծելու : Բայց
կը յուսացուի որ ժամանակը շատ
խնդիրներ կը պարզէ :

Աւստրիական դաշնագրութեան ի-
րենց վերաբերեալ կէտերը գործադ-
րելու դրացած ժամանակ, հելլենք
կը դաշնագրութեան թէ Բ. Դուռն իրենց
նկատմամբ Պէրլինի դաշնագրութեան
24-րդ յօդուածը չգործադրեն : Եւ-
րոպական լրագրութեան ոմանք՝ ինչեալ
դաշնագրութեան այս յօդուածը թը-
րակայի դաշնագրութեան նոր յօդ-
ուածին կը նմանցնեն, որ ինչպէս
յայտնի է՝ հիւսիսային Շվեյցարիոյ ճա-
նիմարքայի վերագաւառելը կը տըրա-
մադրէր : Բայց Պրանսը ինչպիսի տասն
երկու տարիէ ՚ի վեր կը զլանայ անոր
գործադրութիւնը : Միթէ այս ևս չը՞
հաստատուի թէ դաշնագրութեան և
իրաւունք հզօրաց համար են՝ և ոչ
տկարաց : Նիւթագաշտ Եւրոպա հի-
մա այնպիսի գրութեան մէջ է, որ
առանց զօրութեան գրեթէ անհնար
է աշխարհագրութեան մէջ սկզբունք
մը յաղթող ընել : Վերջապէս Պրա-
տոնական յորդոր մը տուաւ Բ. Դը-
րան՝ Յունաստանի հետ սահմանայ
ուղղութեան մասին իրաւաստն ըլլա-
լու : Ուստի Բ. Դուռն կրնայ յանձնա-
կերպարաձգել և յապաղել այս խնդ-
րը, մանաւանդ որ Եւրոպական միջ-
նորդութիւնը գործնական և ազդու
կերպարանք առած չէ :

Իսկ Հելլենաց բանի կերպիւ ի-
րենց պահանջը գործադրելու եղա-
նակին գալով, յաջողութեան յոյս չը
տեսնուիր : Բայց յիշուանայ արիւն-
հեղութենէ : Ալպանական Միու-
թիւնն հզօր կերպիւ կը կազմուի, և
այսօրուան օրս գրեթէ Բ. Դուռն
անկախ կերպիւ կը գործէ : Քոսովայի
գաւառին կառավարիչ Նալիֆ փա-

շան պաշտօնատար մը զրկեց, որպէս
զի Միութիւնը Բ. Դուռն հրամանաց
համեմատ չարժեքու յորդորէ, բայց
Միութիւնը ժողով մ'ընելով, ուր
ծայրայեղ ատենախօսութիւններ ե-
ղան նոյն իսկ Բ. Դուռն դէմ, որոշեց
որ եթէ Գարատաղի և այլն հող տա-
լու համար կառավարութիւնն իրենց
պատուիրակ զրկէ, մահաւաճ պատ-
ժեն զայն, հայրենեաց պաշտպանու-
թեան համար մինչև վերջին շունչ
գիւտնաբեր և վերին Ալպանիոյ իսլա-
մաց օգնութիւն զրկեն : Նազիֆ փա-
շային պատուիրակն հազիւ կրցաւ
փախչելով ազատիլ : Միութիւնը քա-
ռասուն հազարէն աւելի զօրք ունի,
ամենն ալ նոր հրացաններով ու դա-
շոյններով զինեալ : մէկ կողմէն դարձ-
եալ զօրք կը դրէ, զինուորական կը-
թութիւն ընել կուտայ, ամրոցներ
կը շինէ, առուք կը հաւաքէ, միով
բանիւ՝ երկրին տէրն եղած է՝ առանց
կեղծոնական կառավարութեան իշ-
խանութիւնը ճանչելու :

Այս պարագայի մէջ բնական էր
որ Անգլիոյ ներկայացուցած փոքր
Արիւն բարեօրման ծրագրին դու-
րագրութիւնը յապաղէր : Բ. Դուռն
ատոր համար ստակի պէտքը կառա-
կէր, իսկ Անգլիա՝ միայն խորհուրդ
և խրատ տալով կը բաւականանար :
Ուստի Պ. Լէյարտի առաջարկը շատ
առաջ զննցած չերեւիր : Բարեբաղ-
դաբար խօսքանի ապստամբութիւնը
զրպուելու վրայ ըլլալով՝ դոնէ հող
մը պահած պիտի ըլլայ :

Ռուսիա՝ Պէրլինի դաշնագրու-
թեան ՚ի նպատակ իւր արամադրած
պայմաններուն գործադրութիւնը
ձեռք բերելէ ետեւ, Ալպանիոյ
նախապայմաններուն անխօսի մնա-
ցած կէտերուն կարգադրութեան
համար պայմանագրութեան նոր ծը-
րագիր մը հաղորդած է Բ. Դուռն :

Ահաւասիկ, ըստ վաղըթ լրագ-
րին, ինչեալ ծրագրին պարունակած
կէտերը .

1. Պայազլուի քաղաքին և գա-
ւառին թուրքիոյ ետ տրուելն՝ Ալ-
սիֆանիսի պաշնագրութեամբ որոշ-
եալ պատերազմական տուգանքը չպի-
տի աւելցնէ բնաւ :

2. Ռուսիոյ և թուրքիոյ միջև ա-
ռուտական յարաբերութիւնը անփո-
փոխ պիտի մնան :

3. Ռուսիոյ թողուած գաւառաց
ժողովուրդները կարող պիտի ըլլան
Օսմանեան հպատակութիւն ընտրելու :

4. Սոլինայի խնդրոյն վերաբեր-
եալ անհամաձայնութիւնը լուծուած
են :

5. Ըստ որում՝ Ռուսիա դաշնուող
Օսմանեան գերի զօրականներէն չա-
տերն իրենց ապրուստն աշխատու-
թեամբ հողալով, Ռուսիոյ կառավա-
րութեան բնաւ ծանրութիւն եղած

չեն, այս մասին ըլլալիք փոխարինու-
թիւնն հաշուող կարգադրութեամբ
մը պիտի որոշուի :

6. ՚ի նպատակ Ռուս վաճառակա-
նութեան վճարուելիք հատուցումը
10,000,000 ռուպլի պիտի մնայ, ինչ-
պէս որ Ալպանիոյ նախապայ-
մաններուն մէջ որոշուած է :

7. Ռուս և Օսմանեան հպատա-
կաց միջև կախ մնացած դատերը
դատական յանձնաժողովի մը միջո-
ցաւ իրենց վերջնական վճիռը պիտի
ստանան :

Կրտսի թէ մայրաքաղաքիս Ռու-
սական դեսպան Լոպանով իշխանին
այս շարժու Լիվաթիա երթալը՝ սոյն
պայմանագրին պարագայներուն վե-
րաբերեալ հրահանգներ ստանալու
համար է :

Աւստրո-Հունգարիոյ դեսպանա-
տունն եկած պաշտօնական լուրեր կը
ձանուցանեն թէ Աւստրիական զօրքը
շարժ զօր Ծաքսօ վիլայ քաղաքին վը-
րայ յարձակելով, զայն պաշտպանող
6-7000 ապստամբները վանել և քա-
ղաքին տիրել են, ուր բազում զէնք
ուսղմամբերը, թնդանով և պաշար
զանք են :

Ռուս աւստրիական զօրաբաժին
մ'ալ Մայալիցայի և Բլանինայի լե-
րանց վրայ ամրացեալ ապստամբները
ցրուել և այն լեռները գրաւել է :

Քոզլարայի և Բրօզարայի Պալքան-
ներուն չընկալալ բնակիչներն հնազան-
դել են Աւստրիական զօրաց, և ա-
ռանց ընդդիմութեան զէնքերնին
յանձնել են :

Այս լուրերը տուող պաշտօնական
հեռագրաց խօսքին նայելով, Պրանի-
ոյ այս մասին մէջ խաղաղութիւնը
կատարեալպէս հաստատուել է :

Չէթինէէն սեպտ. 12 թուով
հետեւեալ կը հեռագրեն Ռուսական
Կոթս լրագրին :

« Չինուորական գործողութիւնն
անհրաժեշտ կերելի : Իշխանին հրա-
մանաւ, Պոթօ Բէթրօվիչ Տանիլօկ-
լաւ գնաց բանակակազմին կազմե-
լու : Բոթօվիչ ալ Բոսիօրիցա գնա-
ցած է : Մեծ շարժում կայ հոս և
ամեն մարդ պատրաստ է պատերազ-
մի : Կրտսի թէ Նիքոլա իշխանը Բեդ-
րըսպուրկէն մէկ միլիոն ռուպլի ստա-
ցել է պատերազմի ծախսը համար : »

Անցեալ շաբթու Բուռնի տ'Օրի-
ան լրագրին Հայկական խնդրոյն վը-
րայ գրած մէկ յօդուածը նշանակա-
ծ էր : Ինչպէս կը ինչն ընթերցողը,
ինչեալ յօդուածին հեղինակն ո՛չ Հա-
յաստանի ինքնօրինութիւնը, ո՛չ ալ
Հասան փաշայի մը անդ Գրիգոր է-
ֆէնտիի մը կառավարչութիւնն Հա-
յոյ ազեակի դարձան կը համարէր,
այլ ասոր համար ուրիշ փոփոխու-
թիւններ պէտք են կըսէր :

Մինչդեռ հետաքրքրութեամբ կըս-
պատենք որ Բուռնի յօդուածագի-
րն այն հրաշալի փոփոխութիւնները
ձանուցանէ, որ ամենաբոյժ սպեղա-
նի մը պիտի ըլլային մեզ, յիշեալ լրա-
գիրն իւր երեքշաբթի առաւ թուոյն
մէջ Մասիսի գիտողութեանց պա-
տասխան մը կը հրատարակէ, ամբաս-
տանելով թէ Մասիս իւր յօդուածը
չէ կարգացրել կամ հասկցրել, և կը
ջանայ միշտ Ս. Պատրիարքին առ աղ-
գըն մատուցած ծառայութիւնը ժըխ-
տել :

Բուռնի կըսէ թէ Ներսէս Սրբա-
ղանի նախկին յայտարարութեանց նա-
յերով վերհաստատուել բնականաբար չէր
կրնար նկատողութեան առնուլ Հա-
յոյ Պատրիարքին պատուիրակաց ներ-
կայացուցած խնդիրները : Թէ վերհա-
ստողին ատենագրութեանց մէջ բը-
նաւ յիշուած չէ Ներսէս Սրբաղանին
առ նախագահն դրած նամակն, ան-
կէ ընդունած պաշտօնական խոստում-
ները, Գաղղիոյ արտաքին գործոց նա-
խարարին Հայոց խնդիրը պաշտպա-
նելու խոստումը, և այլն :

Կերեւի որ պատերազմին սկիզբը
Ս. Պատրիարքին հրատարակած յայ-
տարարութիւնները ծանր եղած են
Բուռնիէն Բոյոյ միթէ միմիայն Հայոց
Պատրիարքն ըրաւ այնպիսի յայտա-
րարութիւններ, միթէ Բուռնաց ընդ-
հանրական Պատրիարքն աւելի աղ-
դու յայտարարութիւններ չըրա՞ւ,
միթէ Բուռնագի և Ֆիլիպէի Պուլ-
զար եպիսկոպոսներն ալ նոյն իմաս-
տով հովուական թուղթեր չհրատա-
րակելի՞ն : Եթէ մեր Ս. Պատրիարքին
այն յայտարարութեանց համար վե-
հաժողովն Հայոց իրաւունքը ժխտած
ըլլար, պէտք էր որ հետեւեալ օր
նայ Պատրիարքին յայտարարութեան
պատճառաւ Կիրիակի ինքնօրինու-
թիւնը մերժէր, կամ՝ Բուռնագի և
Ֆիլիպէի Պուլզար մետրապօլիտնե-
րուն յայտարարութեանց պատճա-
ռաւ այն դատաւները պատժէր և
ինքնօրինութեան զրկէր :

Չենք գիտեր թէ ինչո՞ւ համար
Բուռնի միայն Հայոց Պատրիարքին
յայտարարութիւններէն կը վերառու-
րի, և միւսները կը մոռնայ :

Իսկ վերհաստատուել ատենագրու-
թեանց մէջ Հայոց Պատրիարքին ը-
րած ջանից չիշուելուն դալով, հար-
կաւ չէր կրնար ամեն մանրամասնու-
թիւնն անոնց մէջ ինչուիլ : Պէրլինի
դաշնագրութեան 61-րդ յօդուածն
Ալպանիոյ պաշնագրութեան 16
րդ յօդուածին հետեւանքն է, և ա-
տենագրութեանց մէջ այն յօդուածին
կարգն եկած ժամանակ Հայոց խըն-
դիրը նշանակուած է, բայց ասկէ չը
հետեւի թէ Հայոց Պատրիարքն աշ-
խատած չէ :

Պէրլինի դաշնագրութեան 61-րդ
յօդուածին կարեւորութիւնը Բուռնիէ

կը ժխտէ գործնաւ. 'ի հարկէ, միւս գաւառաց տրուած մեծամեծ և երաշխաւորեալ արտօնութեանց նախելով՝ այս յօգուածին պարունակութիւնն անոնց կարեւորութիւնը չունի, և այս պատճառաւ Հայաստանի Հայերն իրաւամբ դժգոհութիւն գրացին իրենց վիճակին բարւոքումը կատարելագոյն ապահովեալ չըլլալուն համար:

Բայց մեք կը կարծենք թէ 61 ըդ. յօդուածն՝ իւր ըզր թերութիւններովն հանդերձ՝ ի թէ կատարելապէս գործադրի, կրնայ Հայերը գոհ ընել. վասն զի թէ՛ հիմնական բարեւորութեանց սկզբունքն, և թէ՛ մեծ տէրութեանց հսկայութեան սկզբունքը կը պարունակէ, որ կերպիւ իմն երաշխաւորութիւն ըսել է: Եթէ Բ. Գրական յիշեալ յօդուածին տրամադրած բարենորոգումներն, և ահարոնութիւնը ալ իրենց պատկանած հըսկողութիւնն 'ի դործ չընեն, եթէ Հայերը բարենորոգմանց ընդունակութիւն և արժանաւորութիւն չունենան, ամենէն ընդարձակ տրամադրութիւններն իսկ ոչինչ են:

Քուռիւն Ս. Պատրիարքին ամեն խօսքերուն ու գործերուն զմեզ համարաւ յուշեցնելու համար՝ «Պատրիարքարանի բերան կը կոչէ զՄասիս: Զարմանալի կամ մանաւանդ. ցաւալի է որ մեր մեծարգոյ պաշտօնակիցը գոնէ իւր հայադէր գործակալներէն չէ ստուգած թէ Մասիս Պատրիարքարանի բերանը կամ պաշտօնական թերթը չըլլայէր զաւ. և ոչ իսկ Հայ թերթերէ ոմանց չափ յարաբերութիւն ունի Պատրիարքարանի հետ: Վերջապէս քուռիւն՝ զուցէ դըժգոհելով զինքը՝ «Ռուսաց բարեկամ» անուանած ըլլալունս վրայ, որով քաւ լինի որ զինքը թշնամանելու գիտում ունեցած ըլլանք, կը հարցնէ թէ Մասիս որո՞ւ բարեկամ է...:

Կը պատասխանենք. — ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՆՈՒՅԻՄՈՒԹԵԱՆ:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կալիսիա 23 սեպտ. Սփղանտանի Էմիրն Անգղիական զեապանութեան արգիւելով իւր երկիրը մտնել, Հնդկաստանի Անգղիական կառավարութիւնն անոր դէմ ցոյց մ'ընել որոշեց՝ զորագունդեր զուարեւելով 'ի Բէշապուր:

Լոնտոն 24 սեպտ. Սփղանտանի զէպքին վրայ խօսող լրագիրը պատերազմական լեզու կը դործածեն: Միտքերը խիտ զրգուելու են Անգղիոյ և Հնդկաստանի մէջ:

Վիլնիւս 24 սեպտ. Աւստրիական զօրքերը Լիւնոն դըրաւ շնորհ:

Բեզրապուրի 24 սեպտ. Ռուսիոյ և Սփղանտանի միջև դաշնակցութիւն կնքուած ըլլալուն զրոյցը սուտ կը հանուի հոս:

Պէրսիա 24 սեպտ. Անգղիոյ և Սերպիոյ միջև առևտրական դաշնագրութիւն մը կնքուելու համար Պ. Վուլտ բանակցութեան մտաւ Սերպիոյ կառավարութեան հետ:

Այս առաջը հասած հետաքէքէ

Լոնտոն 24 սեպտ. Թայմը կըսէ որ եթէ Անգղիա պատերազմ հրատարակէ Սփղանտանի դէմ, անհնար է որ գարունէն առաջ ընէ:

Լոնտոն 25 սեպտ.

Օսմ. Քօնս.	12 9/16
Փոլս.	1865 47 1/2
»	1869 46 3/4
»	1871 53 3/4
»	1872 24
»	1873 14 1/4
»	1874 75
Անգլ. Քօնս.	94 13/16

Փարիզ 25 սեպտ. Օսմ. Քօնս. 12,70

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝ Ֆէրիք Սէլիմի վաշտն մայրաքաղաքէն մինչև Ագրիանուպօլսոյ

չըջտիաները Ռուսական զօրաց պարտած տեղերը դրաւող Ռումանեան զօրաց հրամանատար անուանեցաւ: Պուլաւի ճակատի մէջ կաշմուած զօրարանակին հրամանատար անուանեցաւ փոխտեսի վէրի փաշային, որ Եսենեայի զօրաբաժնին հրամանատար անուանեցաւ: Իսկ Եսենայի զօրաբաժնին նախագահը հրամանատար Րէճէպ վաշտն Պուլաւի ճակատի հրամանատար անուանեցաւ:

Երէկ բարձրատիկան զինուորականաց արտաքոյ կարգի ժողով մը գումարեցաւ Սպարապետի գումարնէն նախագահութեամբ վեհ. Սուրբ թանին:

Կըսուի թէ Պանիոյ և Հէրսէքի խնդրոյն վրայ խորհուրդ կը գաւ յիշեալ ժողովին մէջ:

Թող թաքտի խնդիրն երէկ նախարարաց խորհրդին քննութեան առարկայ եղաւ: Այսօր վերտան խորհուրդը պիտի ըլլայ երամիսի պաշտօնատունն, և այս անգամ մայրաքաղաքին զինուոր սեղանաւորք ալ պիտի մասնակցին:

Վախճանեալ Սուրբիան Ապտիւլ Մէհմա կայսեր առաջին տիկինը վախճանելով, երեքշաբթի օրն յուղարկուելով ինքը կատարեցաւ մեծ հանդիսաւ: Մարմինն Էրէնքէյէն Սիրքէճի-Իսկէյէնի հանուելով՝ Սուրբիան Սէլիմի մղկիթը տարուեցաւ, և հան կրօնական արարողութիւնները կատարուելու հետ՝ Սուրբիան Ապտիւլ Մէհմաի գամբարանը թաղուեցաւ:

Կը ծանուցուի թէ Կարնոյ մէջ կաշմուած պատերազմական առեւտրին նախագահութիւնը կայսերական վերադասութիւն Ալի Շէֆիք պէյին յանձնուեր է:

Կը հաւատեն թէ անգղիական նաւախումբը չարախօսք Մեծ կըզուռն առջևէն Պանտրմայի ջուրերը պիտի քաշուի: Իսկ Կէլիպօլս քաղաքէն համար պիտի սպասէ որ Ռուսերը Չաթալճայէն Ագրիանուպօլսի քաշուին:

Թուրք լրագիրք կըսեն թէ երբեք մերից նախարարութիւնը քաղաքիս քանի մը Պանքալուրուն հետ բանակցութեան մտած է մէկ միլիոն իրացի փոխառութեան համար, որուն երաշխաւորութիւն ցոյց պիտի տայ զալ տարուած սխարաց տատանորդն և մաքսական հատութիւն յաւելուածը:

Թէրէճէմուր Էֆէնդի մէջ կը կարգանք թէ Կարնիէն մայրաքաղաքէն Գաղղիական զեապանատունն հեռագիր եկեր է թէ խումար մ'ըստահակին կարնիէն վեց ժամ հեռի խօսոր-Վուրք Գիւլին վրայ յարձակելով, բնակչաց մէկ մասը ջարդեր, մնացեալն ալ ցիրուցան ըրեր փախուցեր են:

Այս ծանր իրողութիւնը Գաղղիոյ զեապանատունէն Բ. Գրան ծանուցուելով, առտիկ հրամաններ գնացեր են տեղական իշխանութեանց, որպէս զի չարագործութեան հեղինակներն անպապաղ բռնելով պատժեն:

Վաղը թի խօսքին նայելով, Երազմուտի երմտական վիճակը վերաւ կազմելու պաշտօն ունեցող յանձնաժողովը խորհիւն համար 100,000 լիւրա տարեկան թոշակ որոշեր է:

* Բնակչաց մեծագոյն մասը Աթիւլիկ Հայեր են:

Թուրք լրագիրք սեպտ. 11 թըւով Կարնոյ կառավարէն Բ. Գրան և կամ հեռագիր մը կը հրատարակեն, որոյ մէջ ծանուցուած է թէ Հայոց աղգին մէջ պարտած խօսքերն ու եղած դանդաղները բնաւ հիմնուին, և կեղծ ցոյցէ մը զաւարիչ բան չեն: Զայս ըսելով կառավարը կիմացընէ թէ Հայոց կրօնական գլուխներն ու երեւելիները կոչելով Բ. Գրան հրամաններն անոնց հաղորդելու հետ, թէ՛ քաղաքին մէջ և թէ՛ գեղերն յայտարարու թիւններ վաղցնել տրուեր է:

Սրբեօք Խոսոր-Վուրի աւարաւորութեան և կոտորածին վրայ Գաղղիոյ զեապանատունն եկած հեռագիրն ալ սօժու է:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴՈՒԼԻՍ

ԷՍԶԱՄԸՆՈՒՄՈՒՄԻԷ	
13 սեպտ. չորեքշաբթի իրիկուն	13.23
14 սեպտ. հինգշաբթի առաւօտ	
բացուեցաւ	13.24
կէս օրին	13.24
Բուլի իրիկուն	Փր. 48
Բողոքարար	Վր. 326
ԲՆԹԱՅԻՐ ԱՐԺԵԹՂՈՒՑ Կ. Պոլս 13 սեպտեմբեր	
Սուրբ թի յիշեալ խորհրդին	3.35
» փոխառութեան	3.30
Կ. Պոլսոյ Պանքային	6.30
Քրիստի յիշեալ	4.35
Քրիստի Օսթրո-Փոլս	
Փոլս 1863	Ֆր. 76
» 1865	» 83
» 1869	» 75
» 1872	» 24
» 1873	» 70
Իրամայ	(Օսթր. թր. 1.50
ԲՆԹԱՅԻՐ ԳՐԱՄՈՒՑ 13 սեպտեմբեր	
Անգլ. թր. 109 6	
Նարոյն սակի	» 87 13
Խմբ. խալ Ռուս	» 89 8
Կըլըմի	» 51 10
Հինգ ֆրանք	» —
Հինգ անգլ.	» 149 30
Պրիմ	» 179

ԱՂԳԱՅԻՆ

Աղգ. վարչութեան նորընտիր ֆաղաքական ժողովն երեքշաբթի օրը Ղալաթիա գումարանէն ինչինչ մասնաւոր խնդրոց կարգադրութեան հետ՝ Աղգ. ժողովէն յանձնարարեալ գաղթականութեան խնդրոյն համար որոշեց վաղը խառն ժողով հրաւիրել 'ի Ղալաթիա:

Յար աւել Պոսթօր լրագիրք կը ծանուցանէ թէ Չէլթուրի Հայ բնակիչք իրենց գայմագմին բնակարանը պաշտօնէն և, բայց գայմագմին փախեր ազատեր է:

Այս յարը սուտ կամ սխալ կը թուի մեզ: Մեր առած տեղեկութեանց նայելով, Չէլթուրի գայմագմին ասիէց չորս հինգ ամիս առաջ ժողովրդեան թախանձանացը չկըրնալով գիմանալ, ինքնին մեկնած է Չէլթուրէն:

Իսկ ժողովրդեան թախանձանաց պատճառը տրոյ ծանրութիւնն է, զորս իրենց աղքատութեան պատճառաւ անկարող են վճարել:

Այս կէտը Ս. Պատրիարք հայրը քանից Մեծ-Եղարքոսին և վերջին օրերս ալ մեծ տէրութեանց դեռ պաններուն ուշագրութեան ներկայադրելով խնդրեր է որ ըստ առաջ նշոյն 30000 զըւ տարեկան տուրք մը միայն առնուի Չէլթուրի բնակիչներէն, և միանգամայն իրենց գայմագմին իրենց մէջէն ընտրուի:

Տիւրիսէն գրուած նամակներու խօսքին նայելով, Ս. Էմիմանայ միտարանութեան մեծ մասը վեհ. կաթողիկոսին գէմ ստանիկ գժգոհութեան կը յայտնեն՝ գանդատորով 'ի մէջ ալլաց թէ Հայաստանի մէջ գործուած հարստահարութեանց առջև

անհոգ և անտարբեր նստելէ դատ՝ վերջին ժամանակներս Ս. Պատրիարքին և Թուրքիոյ բարձրատիկան եկի զեցականաց ջանքերուն արդեւք եղած կամ անոնց հակառակ ընթացք բռնած է:

Կըսուի թէ միտարանութեան դըժգոհութիւնը Ռուսիայեան աղղայնոց մէջ ալ տարածուած է:

Մեր ստացած մամուլաւոր տեղեկութեանց նայելով, վեհ. կաթողիկոսին գաղափարը կամ մանաւանդ համազօմն այս է եղեր թէ Ռուսիոյ կառավարութեան սեղան պէտք չէ բնաւ սպասել մեր աղղին համար, այլ թէ Երազմուտի տէրութեանց և գլխաւորապէս Անգղիոյ պէտք է գիմել:

Վանէն բաղմամբ պատուաւոր անձանց ստորագրութեամբ հետեւեալ նամակը գրուած է մեզ հրատարակելու խնդրանք:

... Խմբագիր Մասիս պատուական լրագրոյ:

Գաւառիս կառավարութեան օգնական Վանս. Աղաթօն Միտիլէ-Ֆէնտի Մուսթիմաթեան պաշտօնին կարգաւելին 'ի վեր իւր բարեջան գործունէութեամբ աղղայնոց սիրելի և խոհմ' բնաւ որոնք ամբողջ ճաճկաց և համակրութիւնն արդէն իրեն գրուած է. ահա իւր այս գաղղի հանդամանք այն երկու աղղաց մէջ սիրոյ կապ մը և ներդաշնակութիւն մը վերահաստատելու անուշադ պիտի յաջորի:

Եթէ երբեք աղղային իրաւունք բացարձակապէս չեն պաշտպանուիր, սակայն սու ալ ոչ թէ յիշեալ էֆէնտիին անհոգութեան յառաջ եկած է, այլ մամանակիս պարագաներուն փափկութեան:

Ռուսի երբ թիւ 1886 փունջ լրագրին մէջ կարգացինք որ աստի գանդատանաց նամակ մը ուղղուած է 'ի Պատրիարքարան յիշեալ էֆէնտիին գէմ' իրաւ թէ աղղային շահոյ հակառակ կը գործէ, ընդ այս արդարեւ գարմացանք յոյժ և ցաւեցանք իսկ:

Այս գանդատն անուշադ առանց մտածելու գրուած պիտի ըլլայ. ըստ մեզ՝ շնորհակալ լինել հարկ է որ այսօր 'ի շնորհս բարեխում' կառավարութեան այսպիսի իմաստուն և աղղատէր պաշտօնեայ մ'ունեցած եմք հոս Մուսթիմաթեան պաշտօնով:

Վանսոյ կը փութամք ձեր պատուական լրագրոյ միջոցաւ հրատարակել վերջինեալ գանդատանաց անհիմն լինելը՝ և վանեցուցոյ այս մասին երեւք ապերախաւ չգտնուիլ:

Այսու առթիւ կաղաքեմք ընդունիլ մեր խորին մեծաբանաց և յարգանաց հաւատարմն, որով մնամք միշտ ձեզ անձնուէրք:

4 օգոստ. 1878 (Ստորագրութեան)

Վանս

Նոյն քաղաքէն կը գրեն նաեւ հետեւեալ:

Հարստահարութիւնք և բռնութիւնք կը շարունակեն ամեն տեղ:

Ամէն մ'ի վեր Պոլսի և Ռուսաստանէն դէպ առտ 'ի վան եկող կարու անեւրէն ոմանք՝ ճանապարհին 'ի սպառ կաղղայեան Գրգերէն. ուստի մեր աղղի հայրենակիցները կամ իրենց զննելու վրա տահելով գալու են, ինչպէս չառերն այն պիտեաւ անմիտ կը գան, և կամ գալու չեն:

Հինգ ամսէ 'ի վեր՝ դաւաւաւացոյց լեզու թրուրուած անուն դժնդակ հաղ մը տրեր է գաւառի վրայ, որմէ բռնուած տղայք՝ հաղացած ժամանակին բուրնը, և ման սարսափելի կերպով կը խօսին, կը մտնեն և մինչև իսկ շատեր կը մեռնին:
